ՀայՓոստ
Հայաստանի Փոստ

#քոմարդիկամենուր

Ել-հարց/2535-2025
29.08.2025թ

«Գագիկ Սարգսյան » ԱՁ-ԻՆ
ՀՎՀՀ՝ 25424907
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 46
Հեռ.՝ (+374) 98 08 00 65
Էլ.փոստ՝ tender@keystone.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն 2025 թվականի հունիսի 27-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի և «Գագիկ Սարգսյան» ԱՁ-ի միջև կնքված՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար համազգեստների մատակարարման կատարման թիվ «ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-25/44»-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), «Գագիկ Սարգսյան» ԱՁ-ը պարտավորվել էր մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը 2025 թվականի հունիսի 27-ից մինչև 2025 թվականի հուլիսի 22-ը:

«Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Գնորդ) կողմից, Պայմանագրով Գնորդին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Վաճառողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի հետևյալ դրույթները՝ 2.1.7. Գնորդը իրավասու է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը, մասնավորապես՝ 2.1.7.1. Պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե. բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքը, վերջինս ներառյալ՝ մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների թերություններով, ինչպես նաև պարտավորության բովանդակությամբ նախատեսված այլ պայմանների խախտմամբ կատարման դեպքերը:

Նույն Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ նման հրաժարումն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ թույլատրվում է, պայմանագիրը համարվում է համապատասխանաբար լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով նշված իրավական դրույթներով՝ Գնորդը միակողմանիորեն և ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցման ապահովման նպատակով առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված կարգով:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչպատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե վերջինս խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնումների գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որի հետևանքով պատվիրատուն միակողմանիորեն լուծել է պայմանագիրը կամ դադարեցրել տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին, ինչպես նաև այն դեպքում, երբ մասնակիցը սահմանված ժամկետում (հրավերով և/կամ պայմանագրով նախատեսված) չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը:

Նշված հիմքերի առկայության դեպքում, պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված պատճառաբանված որոշման հիման վրա լիազոր մարմինը տվյալ մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե որոշման ներկայացման վերջնաժամկետի օրը մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարում է պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշում չի ներկայացնում լիազոր մարմնին:

Հաշվի առնելով վերը ներկայացվածը՝ տեղեկացնում ենք, որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում

- պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 27,600 (քսանյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.2 կետի,
- իսկ պայմանագրի ապահովման գումարը կազմում է 18,400 (տասնութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.3 կետի,

որոնք անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բացված **1930003703150100** հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք, որ «ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-25/44»-1 ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովման գումարները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնեք «Հայփոստ» ՓԲԸ-ին, կցելով վճարումը հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե նշված գումարները փոխանցվեն «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված սահմանափակումները:

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**